

ԱՐԱՄԻՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Դրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 19

Գ. ՇՐՋԱՆ

11 ՄԱՅԻՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագիրներ Կ. Պոլսոյ համար «ՄԱՍԻՍ»-ն էր. եւ զտառներուն համար ՅԻՍԱՆ ղշ., կանխիկ վճարելի: Արտատպահան 12 ֆրանկ կ'ըլ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամեայ բաժանորդագրութիւն լրնցուողի: Բաժանորդագրութիւնները կը սկսին աւիտ անկէ: Մասիս հրատարակ կ'ելլէ տարեկան շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խիղջն խնայեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ աշտ տարեկանները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍԵԻ

Հարցէ

در علیّه آغوب ماطیوسیان مطبعه سنده «ماسیس» غزّه می اداره سنده

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթեոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերալի Լիսին դեմ

Դե. Եե. Շր. օրերը առաւօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուն Ժ. 11½

Բե. Դե. Ուր. օրերը Ծեց մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ (Հետաքրքրաշարժ
Վեպ երեք հատորով) Թարգմ. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ,
Վաճառման կեդրոնատեղին է Պաղատաւեան Դրատունը,
Կը գտնուի նաեւ ամէն հայ գրազատաներու քով:

Գին 15 դրուշ:

9—10

ՊՐՈԻՍԱՅԻ ԽԱՎՈՒՆԵՐԸ

ԳՈՐԾԱԾԵՑԸ

ՊՐՈԻՍԱՅԻ ԽԱՎՈՒՆԵՐԸ

հարգալից,
ներքն աւելի ԴԻՄԱՑԿՈՒՆ՝ ըլլալուն աւ-
րակոյս չկայ, հետեւապէս աւելի ԱժԱՆ
հն:

ՍՄԱՐՏԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՈՑ

ՊՐՈԻՍԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՆԵՐՈՒ

յաւագոյնը ըլլալու համարը կը վայելն
տարիէ ի վեր:

Դիմել՝

206—29, Եկեղի Զարեք, Մահմուտ Փաշա, Կ. Պոլիս

ԻՒՆԻՅՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828—1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն»-ի ապահովագրից կ'ընծայէ հսկայ երաւխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ԶԵ ԳՏՆԵԼ ԱՐԵԻՆԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ զինքով: Նպատաւար պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ժ'ընէ ընկերութեան
պայմանները: Շահարաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօն
ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաժնեմաս (accumulation des
bénéfices) ՅՈՒԻ եւ ՎԼԱՍՍԿԱՐ գրութեամբ գործով ընկերութեանց կ'ապահովու-
գրուին:

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան, Օսմ. Պաշայիս դիմացը
Դորձակաւորքինք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

517 ՏԱՐԻ

— II ՄԱՅԻՍ 1902 —

ԹԻԻ 19

ԲՈՎԱՆԴԱՆԻԹԻՆ

Անհետացող դժգոհներ. (Պառնաս Պողոս Էֆեսոսի). **Տ. Ա.**: — Շաքրումն կեանքը. **ՍԳԷԼԼԱ.**: — Բա-
րիկամ արձագանգ. (Լուսին-Բրայթոնի գործը). **Մ.**: — Լուսնին տակ. (Բանաստեղծություն). **Վ.Ս.Բ.Գ.**
ԳԷՍ.: — Կեանքի պահպաններ. (Լեզուար կերպ). **Գ.Ե.ՂԱՄ.**: — Նմոյց մը հայրենական գրականու-
թենէն. (Երջանկություն). **ՄԱՌԼՍՍՏՈՒԼԻ.** (Թարգմ. **ՄԻՍՍՏ.Բ. Գ.**): — Ներքին. (Գերմ. վեպ). **ԲԱ-**
ՈՒԼ ԶՍՅԱՆԷ.: — Ելուստներ:

ԱՆՅԵՏԱՑՈՂ ԴԵՄՔԵՐ

ՊԱՌՆԱՍ ՊՕՂՈՍ ԷՖԷՆՏԻ

Դիտական Բրոնիկի մը եւ Յուշատեարին
մէջտեղ, վերջին պահուն, երկու ատուրժ
պէտք էր որ ծանուցուէր մահը Պառնաս Պո-
ղոս Էֆէնտիին՝ այս թերթին մէջ որուն հրա-
տարական առաջին տարիներուն կանոնաւոր
աշխատակից մը, խմբագիր մը եղած էր եր-
կար տուն: Եւ սակայն դիպուածը, լրագրա-
կան կեանքի դիպուածը, որ տարօրինակ
քմահաճոյքներ կ'ունենայ երբեմն, այսպէս
անօրինակ նախորդ շարթուն: Մատթէոսեան
Տպարանին արագատիպը հազիւ սկսած էր թա-
ւալիլ Մաւիսի ութածալ էջերուն վրայ,
համայն ելլող վայրաշարժի մը պէս, երբ
յանկարծ լուրը հասաւ Իւսկիւտարէն — «Պառ-
նաս Էֆէնտիին մեռեր է»: Տիտուր պարտա-
կանութիւն մըն էր ինծի համար ալ, ինչպէս
մամուլի ամէն աշխատատեղերուն համար,
անմիջական կերպով արձանագրել այս գոյժը.
եւ մամուլը, որ (Պառնաս Էֆէնտիին խմբա-
գրապետութեան օրով) մէկէ աւելի անգամներ
կանդ առած էր՝ սրբապաշտեան մը համար,
այս անգամ կանգ առաւ... անոր մահացոյցին
անդաւորմանը համար: Այնքան քիտուր ու
խորագրեցիկ լան մը կար այս անակնկալին,
այս contraste ին մէջ, որ ձեռքս առաջ չէր եր-

թար աւելի բան մը գրելու: Լակոնական
մահազոյժ մը թերեւս աւելի արժանաւոր ըլ-
լար այդ պատկանելի անձնաւորութեան յի-
շատակին, քան ածադարանքով գրուած քա-
նի մը ատուր, որոնց մէջ չպիտի պատկերա-
նային իր կեանքին դիտաւոր գիծերն իսկ:

Եւ այսօր, երբ լաջն ժամանակ ու լաջն
էջեր ունիմ արամադրութեան ներքեւ, ու
շարաթ մը անցած է արդէն Պառնաս Էֆէն-
տիին մահուանը ու թաղմանը վրայ, կը
մտածեմ թէ ի՞նչ նոր բան կրնամ աւելցնել
այն կենսագրական ծանօթութեանց ու ար-
ժանաւոր ներդրումներուն վրայ որոնցմով լեց-
ուեցան օրաթերթերը:

Իր անունը, որ երստեւեմնաբար ան-
բաժան էր սեղական մամուլէն՝ Տպագրական
Տեսչութեան մէջ իր ունեցած պաշտօնին
լեւծունքով, անկէ առաջ ալ ու այդ երկար
չրջանի սկիզբներն ալ կցուած մնաց մամուլին,
միւսեւոյն ժամանակ իրբեւ հրատարակագիր:
Խմբագրապետ Սեւ հանդէսին զոր 1864 ապ-
րիլէն սկսելով երեք տարի վարած է
Մատթիա Գարագաշեանին հետ, ու աշխա-
տակից օրաթերթ Մաւիսին, ուր քաղաքա-
կան անսովորութիւններ, անսեռական ու բանա-

սիրական յօդուածները դրած է 1870էն 1880, Պառնաս էֆէնտի 1868էն մինչեւ 1888 աշխատակցած էր նաեւ Ֆիլիք էֆէնտիի հրատարակած թուրքերէն թերթերուն եւ ամէնէն վերջը Թարիքին, ինչպէս նաեւ Ահմէտ Միթհաթ էֆէնտիի տնօրինութեամբ հրատարակուող Օսմանլի Ֆրանսերէն քաղաքական կիսաշաբաթաթերթին, — ինչ որ ցոյց կուտայ իր լեզուական հմտութիւնը ու գրելու կարողութիւնը որքան հայերէնի՝ նոյնքան եւ օսմաներէնի ու ֆրանսերէնի մէջ, որոնց վրայ աւելցուց ետքէն անգլիերէնի ու գերմաներէնի ալ հմտութիւնը :

Թուականներու շարքով եւ կենսագրական նօթերու կրկնումով մը չի խնդրու համար դրուածքս, լաւագոյն պիտի սեպեմ աղաւթութիւններու շուրջը սաւառնել, անհատական ու հանրային ապաւորութիւններ, որոնց մէջ ամէնէն կարկառուն գիծը իր կեանքին իր գրչի մեծ գործունէութիւնը եղած է, դուր ու դադար առնել չի գիտցող աշխատասիրութիւն մը, որ պատանի հասակին մինչեւ մահուան շարժը շարունակուեցաւ, գրեթէ կէս դար : Եւ գործունէութիւն մը այնքան բեղմնաւոր ու պատուաբեր՝ որքան անխօսուկ ու համեստ :

Պառնաս էֆէնտին՝ թէ՛ Տպագրական Տեսչութեան Ա. քարտուղարի կարեւոր պաշտօնովը եւ թէ՛ նախկին ծանօթ հրապարակագրի համբաւովը անուամբ միայն ճանչցող մը՝ չպիտի ուզէր հաւատալ թէ ինքն իսկ է, — առաջին անգամ տեսնելուն, — այնքան սքողուած, անչուկ, անսթեկեթ անձ մըն էր : Եւ ասոր հակառակ, իր ո՛վ ըլլալը չգիտցող մըն ալ պիտի կռահէր թէ սովորական մարդու մը զէմ՝ չէ որ կը գտնուի, այնքան պատկառատ բան մը կար իր ամբողջ երեւոյթին, իր խօսուածքին եւ շարժուածեւրուն մէջ :

Խմբագրատանց մէջ, ուր կ'այցելէր երբեմն, իր երեւումը կ'ոգնուէինք ո՛չ միայն ակնածանքով, այլեւ համակրանքով. եւ իր սակաւախօսութեանը հակառակ, — կամ թե՛րեւս ճիշդ ասոր համար, — բացառիկ կշիռ մը ունէին իր ամէն մէկ խօսքերը, զիտուութիւն մը կամ գնահատական մը՝ այս կամ

այն խմբագրին ոճին, լեզուին կամ գրական կարողութեանը նկատմամբ :

Հակադրութեամբ մը, զոր չի կրցած բերել ըմբռնել, ինք որ ասին մը գրիչով փճարանող մը, polemiste մը եղած էր որոգրութեան մէջ, հիմայ կը խորշէր վիճաբանութենէ ու գաղափարի մը արդարացունքին անհրաժեշտ պարագային իսկ՝ բնական ամէնէն կարճ ու կարուկ ձեւը կ'ընտրէր :

Օր մը ընաւ չի տեսնաք իր ժպտիլը, թէն խոփու չէր զէմքը, — բայց այնքան լուր՝ որ ժպտալ, եթէ երբեք զար յոգնած ու հիւսար այտերուն վրայ, աննշմարելի կ'անցնէր իր կնոջ ու մէկ դաւկին մահը առին տարի այդ ժպտի մնացորդն ալ, եւ կուրծքի հիւսանքութիւնը ուսկից կը նեղուէր տարիներ ի վեր, կանխահաճ ծերութեան մը առաջին նշանները դրոշմեց իր վրայ : Եւ սակայն, իր այս հոգեկան տառապանքներուն, իր սուղի հակառակ, միշտ ճշդապահ, միշտ անխիղճ աշխատող, միշտ խորաթափանց միտք ու առողջ դատողութեան տէր մարդն էր անխառն :

Աղգային չըջնակի մէջ, — Սեյի ու Մուսիսի խմբագրութիւններէն դատ, — վաղէ ատենօք ժողովականութիւն եւ սյահ մըն ալ ատենապետութիւն Ուսումնական Խորհուրդին, իբր երեսուն տարի առաջ, եւ ինչպէս դրուեցաւ, անուանական պաշտօնավարութիւն մը չէ եղած իր ատենապետութիւնը խմբագրած ըլլալով տեղեկագիրներ որոնք ազգ. վարժարաններուն ու դաստիարակութեան վրայ ընդհանրապէս՝ գիտակից ու չափահեկան տեսութիւններ կը նշարունակէին :

Բարեկիրթ ու ազնուաբարոյ՝ իր տեսակցութեանց մէջ, անխնայ ու մէթոսիկ իր խառնութեանց մէջ, ընտանիքի տիպար հայ եւ մամուլի վաղեմի վատտակաւոր, Պառնաս էֆէնտին իր մահուամբ կը թողու մտաւորական գործունէութեան ու ինքնօրնութեան յառաջընթացի անուն մը որ այնքան աւելի մեծ պիտի երեւնայ զինքը հինուց ու մօտէ ճանչցողներուն աչքին մօնաւանդ, որքան պզտիկ ու համեստ էր սկզբնաւորութիւնը Սեւրաստացի պատանիին որ 1860ին Պարսկապար, ուսմունք սորվելու եւ «մարդ ըլլալու» խափալով որուն հասաւ կատարելագոյնը :

ՕՏԱՐ ԷԶԵՐ

Օտար գրականութեանց լուսազոյն արժա-
դրութիւններէն բնօրնօք հասուածներ ճեր-
կայցնել մեր ընթերցողներուն, — առանց
սահմանափակուած մնալու միմիայն Ֆրան-
սականին մէջ, — *Մասիսի* խմբագրութեան
ծրագրին մաս կը կազմէ: Այսպէս, *Ներինսին*
նէս միեւնոյն ժամանակ, նախորդ թիւով
հրատարակեցինք մոյջ մը ամերիկեան բա-
նասեղծութեան. եւ ստորեւ ալ կը դնենք
Հոլանտացի համբաւաւոր գրագէտ Մուլշասու-
լի գեղեցիկ մէկ գրուածքը որ իր պարզու-
թեանը մէջ հիւանդի է պարզապէս:

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ

«Ուզին որ դրախտի դրան առաջ ի դուր
կ'աղերսէր Երանիւիյնեհու Կայսնը ընդուն-
ուելու համար, չառ մը ապարդիւն վորձերէ
յիտոյ՝ մատուց վերջապէս երկրին ընծայած
առնելաւ բանը, զվճացող մեղաւորի մը
վերջին հառաչանքը, եւ շնորհ դատա դրան
պահապանին առջեւ, իր բերած ընծային
սարուքիսն համար» :

Այս էր խօսակցութեան մը նիւթը մեր
ուսուցչին եւ մեր՝ իրիկուան զպտցի աշա-
կերանկրուս միջեւ։ Արեւելեան գեղեցիկ
պատմութիւնը, որ ամէն շեշտունքով երգուած
այս աւանդագէտին հիմքը կը կազմէ՝ այն
իրիկունը բնականաբար ասիւթ տուած էր
լուջ խօսակցութիւններու՝ ճշմարտին ու գե-
ղեցիկին վրայ։

«Արդե՞ք զղէացող մեղաւորին թողութեան
աղբիւսանքը ամէնէն սուրբ բանն է իսկա-
պէս, ինչ որ այս աշխարհը կրնայ տալ» —
հարցուց ռուսացին՝ Բնկերս Աւգոստս :

«Պատմութեամբ աղբյուրները ներկայացնէ»
պատմականաց ուսուցիչը «Եւրոպայի իր նախ
աղբյուրները քաղաքական, մշակութային, մշակութային
ուսման, հայրերի ինքնին զանազան եւ յետոյ
աղբյուրները խօսքով, Բուրձնիքով, Բուրձնիքով
քաղաքի մը աւելի գեղեցիկ ու սուրբ է» :

Աւգուստ ո'չ մէկ պատասխան տուաւ,
խորհեցաւ ու լռեց :

Ուրիշ բաներ դրաւեցին իրիկուան մնացած
մասը, եւ քէն ալ խաղաղցինք՝ ինչպէս կըս-
պասուէր աղայոցմէ, որոնք ամբողջ օրը
հսկողութեան տակ մնացած՝ վերջապէս դը-
տանքի ժամը հասած կը անհնչին:

Աւգուստը՝ ինչպէս արդէն ըսի՝ իմ զըպ-
րոյցական ընկերս էր, նաեւ խաղի ընկերս։
Հաղիւ տամբըջորս տարեկան — տարիք մը,
ուր նկարագիրը չի ցուցներ դեռ այն սուր
զինագիծերը, զորս հետագայ տարիները պիտի
զծագրեն — շատ շուտ կարելի էր ճանչնալ,
որ ինք այն բնաւորութիւններէն էր, որոնք
ուրիշներու համար ամէն բան, իրենք իրենց
համար սակայն ոչինչ են։

Դատարանին ամենէն ընդունակ աշակերտն էր Թերեւս, եւ միշտ վերջինն էր, որ զըր ուստիքն մը համար նկատողութեան կ'առնուէր։ Ընկերակիցներէն ոչ մէկը իր ծնողքէն ալիչակի առատօրէն զրամ եւ հագուստ չէր ստանար եւ սակայն ոչ մէկն ալ այնչափ շուտ չէր նեղուեր մէկուն կամ միւսին պատկառութենէն։ Իր Ժամանակը, իր ստացած նուէրները, իր զգեստները եւ իր խնայողութեան լուծանքը, բոլորը ուրիշներուն կը յատկացնէր, բոլորը կը պարգևէր։

Անդամ մը միւր ընկերակիցներէն մէկուն հանդիպեցաւ, որ ծառէ մը բոյն մը վար առած էր :

— Ինձի առ'ւր թոյնը , դռնէց Ս. Գրուստ :

«Ո՛չ» պատասխանեց տղան :

—Մէկ գուլղըն կուտամ քեզի ատուր համար :

«Ո՛չ, Վար բերելու համար լշատ նեղու-
թիւն քաշեցի» :

Աւգուստի ամսոյջ հարստութիւնը այդ
գուլղընն էր, զոր սպուն առաջարկեց :

— Կռքե՞ս նոր գլխարկս տամ փոխարէնը
— հարցուց Ազգուստ ասիպոզարար : — Ա՛խ
չէ՛ : . . . յարեց , մտաբերելով որ զայն¹ աղ-
քատ ազու մը տուած էր , որ գլխարաց կը
շրջէր , չէ՛ , չէ՛ . . . :

Խեղճ տղան չէր գիտեր թէ դեռ ի՞նչ առաջարկէր , բայց բոյնը սիրտը կը ճնշէր :

«Այն փողկապի զարդասեղը տուր ինձի :

զոր արձակուրդին վերջը 'տունէն բերած էիր» ըսաւ վերջապէս ընդաքաղց աղան, «եւ բոյնը քեզի կուտամ» :

Աւգուստ կը վարանէր : Արժէքաւոր աղանանց մըն էր : Ասոր համար չէր որ կը տատանէր Աւգուստ — բայց այդ ասեղը իր մօրմէն նուէր ստացած էր, իր մօրմէն : Եւ սակայն . . . խեղճ թռչնիկները :

— Ա՛ռ, ըսաւ ան, ահա ասեղը, աս'ւր ինծի թռչունները :

Տղուն ուղածն ալ առ էր, բոյնը տուաւ, գոհարեղէնը առաւ եւ կ'ուզէր հեռանալ :

— Հոս նայէ, գոչեց Աւգուստ, ցցո՛ւր ինծի բոյնին ասեղը, կրկին հօն կուզեմ դնել զայն :

Միւսը՝ ծառին վրայ բոյնին ասեղը ցցաց իրեն : Աւգուստ վեր մագլցեցաւ, բոյնը ցոյց արուած ծակին մէջ հաստատեց : Կ'ուզէր վար իջնել, յանկարծ ինկաւ եւ աջ թեւը կոտրեց :

Երբ թեւը ասեղը բերին, — ինչ որ քանի մը վայրկեանէն կատարուեցաւ, զինքը տուն տանելով — խնդրեց ինձմէ երթալ տեանել թէ արդեօք թռչուններու ծնողքը կրկին իրենց բոյնը եկած էին :

Բերած աւետիսէս զգացած ուրախութիւնը անելի մեծ էր, քան թեւին պատճառած ցաւը :

Այսպէս էր իմ մանկութեանս, իմ աղա-յութեան տարիներուս ընկերը :

Ողիի մասին խօսակցութիւն անելի ունեցած օրուան յաջորդ իրիկունը՝ քանի մը աղայ մէկտեղ հաւաքուած էինք :

Աւելի պատահաբար քան զիտմամբ՝ խօսակցութիւնը դարձաւ այնպիսի նիւթի մը վրայ, որ շատ մօտ էր քիչ առաջ մեր ուսուցչին դրած ընտրանին : Երջանկութեան վրայ կը խօսէինք :

Ո՞վ չի յիշեր թէ ինչպէ՞ս մարդ աղայ հասակին այնպիսի երջանկութիւն մը կ'երազէ, զոր իրականութիւնը երբեք չընծայեր եւ օրուն մեր մարդկային հակատաղիրով բնաւ չենք կրնար հասնիլ :

Դասի ժամանակ՝ վերջին իրիկունն դասախօսութիւնը մօիկ բրած էինք ճշմարիտ Գեղեցիկին վրայ, հիմակ ալ խաղի ատեն երջանկութեան մասին մեր հասկացողութիւն-

ները եւ մեր իզները մէջտեղ կը դնէինք :

Sunt pueri pueri; pueri puerilia tractant
«Տղաք տղայ են, տղաք տղայօրէն կը խախն» : Այս խօսքը հոս ալ կը յարմարէր, իր թէ միայն հոս յարմարէր . . . :

«Հարստութիւն, որովհետեւ . . . » :

«Պատիւ եւ ակնածանք, որովհետեւ . . . » :

Այսպէս կը պապուային ու կը չաղակրտէին փոքրիկ վիճարանողները խառնալիքի օրէն :

Ես յապաւեցի այն պատճառարանութիւնները, զորս խրաքանչիւրը իր ընտրութիւնը պաշտպանելու համար առաջ կը բերէր : Թե՛ ձեզմէ խրաքանչիւրը իր քմահաճոյքին համեմատ երեւակայէ զանոնք, ինչպէս որ ասի տարիքին մէջ անձամբ պիտի լեցնէր, ասոնց սակայն աղայութեան ժամանակի խորհրդածութեան պակասին ետեւ թաքչելու :

— Ի՞նչ դուն, Աւգուստ, ի՞նչ իզներ ունիս հարցուց խումբէն մէկը : Դուն ալ այն կարծիքէն չե՞ս թէ պատիւը դրամէն գերադասելի է :

«Անշուշտ, բայց ես անելի լաւ բան զիտեմ» :

— Ի՞նչ է, գոչեցինք բոլորս միասին :
Հիմա կրցանք լսել այն պատասխանը, որուն ուսուցչիչը նախորդ իրիկունը ի վրայ սպասած էր :

«Ամենամեծ երջանկութիւնը անհրաժեշտ է, վայելելու համար ինչ որ ամէնէն գեղեցիկը, ամէնէն սուրբն է : Երէկուան պատմութիւնը այն եղբոր մասին, որ իր ժանտախտէ բռնուած քոյրը չի ձգեց, այլ անդ շունչէն վարակուելով հետը մէկտեղ մնալու շատ յուզեց զիս : Մտածեցի թէ ողին որ երկու մեռնողներուն մահուան հառաչանքը բռնեց ու երկինք տարաւ, ամէնէն գեղեցիկ պարզեւր տարաւ որ երբեք զսփուած ըլլայ, եւ այդ եղբոր բախար չափազանց նախանձնիքի թուի ինծի : Այս պատճառով, եթէ ես իմ երջանկութեանս համար իզձ մը արտայայտելու ըլլայի, պիտի ուզէի այդպիսի ձեռք մը քրոջ մը կամ եղբոր մը համար . . . »
մէկ բանիս համար մնանիլ : Կարծեմ անելի մեծ երջանկութիւն մը կարելի չէ երբեք կայել :

ինչպէս կը տեսնէք, ողիւն պատմութիւնը մեզի համար քիչ մը փոխած էին: Փոխանակ մեզեղ սիրահարներու, — որովհետեւ դեռ ազայ էինք, — եղբոր ու քրոջ մօտին խօսած էին մեզի:

Ազուստ իր կարծիքը յայտնած էր եւ լսեց՝ այտին վրայ խոր զգայումի արցունքով մը:

Մենք երեսը նայեցանք եւ չհասկցանք զինքը: «Մեռնիլ — եւ երջանկութիւն» մեր ոչ այնչափ բարձրաթիւ մտածումներուն համար անըմբռնելի էր աս:

Բայց Աստուած, որ այս զգացումը ներշնչած էր անոր՝ հասկցաւ զինքը... եւ ընդունեց երջանկութեան ազաւանքը ու կատարեց:

Մօտաւորապէս տարի մը ետքը — յունվարի տասներեքին էր — չմուշկի զբօսանք կ'ընէինք: Ազուստ Ծնունդի տօներէն յետոյ իր պզտիկ եղբորը հետ դպրոց վերադարձած էր: Ան՝ փոքրիկ նորեկին քայլերուն վրայ կը հսկէր, անոր կը սորվեցնէր մեր զբօսանքներուն մասնակցիլ եւ այսօր ալ անոր քովէն էր զատուեր:

Անդամ մը սակայն չկրցաւ զիմադրել զանգաղ սահող տղուն քովէն հեռանալու փորձութեան ու մեզի հետ միասին առաջ անցաւ. — յանկարծ աղաղակ մը կը լսէ, շուրջը կը նայի ու չի գտներ սիրական եղբայրը: Տղան սառչոյցի բաց ծակի մը մէջ անհետացած էր: Իսկ Ազուստը՝ Փութով կը նետուի սառուցապատ ջուրին մէջ, լիճին կապարի պէս ծանր մակերևւոյթին տակ կը խորասուզի եւ... Աստուած լսեց իր խնդիրքը — ան խեղդուեցաւ, մինչ իր եղբայրը փրկել կ'ուզէր:

Քառուներովը տարիներ անցած են այդ օրէն ի վեր իմ գլխուս վրայէն, սակայն յունվարի տասներեքը երբեք առանց թախծալի յիշատակի մը չծագեցաւ: Հեռու, շատ հեռու քնից զիս բախար այն ակէն, ուր զիւցաղական մահը տղուն սրբազան իզճը պատկեց: Սակայն որչափ ալ ցամաքներ ու ծովեր բաժնին զիս այն ջուրի անդունդէն, որ զինքը մահացուց ու իրեն դամբան եղաւ, մտքով միշտ կ'ուխտաւորիմ գէպի այն մայրը, ուր ան՝

ողիւն պէս յաւիտենական կեանքի դուռնէրուն առջեւ մուտք խնդրեց եւ չմերժուեցաւ:

Գերմ. Թարգմանեց
ՄԻՍԱԲ Գ.

ՄՈՒԼՏԱՏՈՒԼԻ

ԼՈՒՍՆԻՆ ՏԱԿ

Լուսնին պայծառ լոյսին տակ
Նսած ծառի մը կուեսին,
Ի՞նչ անու՞հ է, ի՞նչ հեւսին,
Երբ կը խոկամ միամիտակ:

Ու կը դիտեմ ներդաւնակ
Շրջանրկար դաւեսին,
Լուսնին պայծառ լոյսին տակ,
Նսած ծառի մը կուեսին:

— Ի՞նչ կը պակսի ինձ հիմակ:
Դո՛ւն, պե՛րն գոհարն իմ սրտին.
Ու մեղկ նայուածքս չորսդին
Քեզ կը փնտռէ շարունակ
Լուսնին ներմակ լոյսին տակ:

ՎԱՐԴԳԵՅՍ

ՇԱԲԹՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

— 〰 —

Հառնող շարթուան հետ դործ ունենալ, եւ շարթով առաւելապէս զբաղեցնող ամէնէն մեծ խնդիրը անտեսելով անցնիլ, անհնար պիտի ըլլար ապահովաբար, որչափ ալ շուկայիկ ու տգեղ զրուագներով զարդարուած գտնէին շատեր այդ աղմկայոյց խնդիրը, որ «հրաշագործ պատկեր»ներու, «բանայեալ»ներու կամ «նորագիւտ այագմա»ներու անուանակոչութիւնովը հռչակուեցաւ, օրուան միասահմուռ խօսքը դառնալով որչափ աղմկասէր լրագրութեան՝ այնչափ մըն ալ միամիտ փողովուրդին:

Ու սուտ կամ իրաւ հրաշագործ «բանայեալ»ի մը գիւտին տարածայնութիւնէն ետքը, համոզուեցէք որ անոր առաջ բերելիք իրարանցումը, երբեք չէր կրնար տարբեր ըլլալ լսուածէն, որքան ատեն որ թեթեւամտութեան եւ կոյր աւելորդապաշտութեան պէս բաներ եւ դեռ ինչ որ կ'ուզէք այս շարքէն,

առմիկ ժողովուրդին տրուած առաջնակարգ ձիրքեր են , ճիշտ այնպէս ինչպէս սիմոնականութիւնը ընդոծին ձիրքը եղած է կղերին :

Միաժամանակ կերպով այս երեք «բանայեան»ներու վիճուկը անգամ մըն ալ տխուր գոյներով երեւան բերաւ թէ , տակաւին նախապաշարուած ինչ թանձր մշուշի մը մէջ կը թարթալի ժողովուրդին անուազասակարգը , մինչեւ արմարաբար անձնատուր ըլլալու չափ քանի մը ընչաքաղց կրօնաւորներու գանձիկ յերկրանքներուն , որոնք քրիստոնէութեան ամօցնող աղաք կը դառնան , զիտակից դատողութեան առջեւ : Որովհետեւ , անբարոյական սուտղութեան մը Յոյներու Պատրիարքարանին իսկ կողմէ հրապարակաւ հերքուելէն ետքը , ա՛յ տպանովարար սոք կոխողներ չպիտի դանուէին , հաւատացնելու թէ այդ բանայեաններէն այնինչը եւ թանասուն տարուան հաշմանդամ մը ոտքի հանեց , երկու ոսկիի փոխարէն , — պայման է առ , չմոռնա՞ք , — ու բողկի պէս անտնկ կայտառացուց որ , մարդը սկսաւ կոխկռտել ոտքին հանդիպածը :

Բայց ամէնէն արուար դրուաղը այս ծիծաղելի սնապաշտութեան մէջ , մերիններուն այն փութկոտ իրարանցումը ու խեղայեղ յափշտակութիւնն էր , — աստիճան մըն ալ ուժգին յայն ժողովուրդինէն , — որով անոնք ուզեցին հոգիով մարմնով փաթթուել հրաշագործ «բանայեան»ին , որ շրթունքը անգամ չէր երերցնէր իր հրաշքը գործելու համար , մինչեւ որ . . . թաթիկը ծանրիկէլ զրամի մը տաքութիւնը չզգար : Ո՛վ դարասկզբիկ խուլացի հրաշագործութիւն , որ դուն անդամ դպացած ես Բլոնտայքի կարմիր մետաղին աղուոր բուն ըլլալը :

Աչքի առջեւ բերելով լրագիրներուն արձանագրած առատառօցութիւնները , որոնք տեղի ունեցան «բանայեան»ի այս խնդրին շուրջը , չեմ կրնար համոզել ինքզինքս հաւատալու համար թէ , մարդ կրնայ նիւթապաշտ կղերներու յերկրած այս տեսակ խարդախութիւններէ խաբուելու չափ ապշտ ըլլալ , — օր մը չէ , երկու օր չէ , ամբողջ շաբաթներ , — երբ միւս կողմէ ալ , — տխուր հեղնութիւն , — անկարներու մագին թելը ան-

գամ չչարժիր անդէն , ու իրենց չահը մինչեւ կ'ըլլայ որ բեռնակիրի մը կռնակը եկբը խախտութեան ալ կ'ենթարկուին :

Ինչ որ ալ ըլլայ սակայն , Յոյներու Պատրիարքարանը ըրաւ ամէնէն սքանչելի անօրինութիւնը որ կրնար ըլլալ , այս տեսակ աւելորդապաշտական պարագայի մը մէջ , իշահաստանէն հեռացնելով մինչեւ անգամ քահանան , որ անամօթութիւնը ունեցած էր քրիստոնէական հաւատալիքներու ձեւին տակ ամէնէն վարնոց խաբէութիւնը նիւթելու :

* * *

Երբ խնդիրը ժողովուրդին բարեպաշտական զգացումները վիրաւորող եւ քրիստոնէութեան անունին մուր բերող սպարազաններ վրայ է , դժուար չէ կապ մը գնել Յոյներու «բանայեան»ի խնդրին եւ մեր Ղալաթիայի եկեղեցիին մէջ հինգշաբթի օրերը ծագած զայթակղութիւններուն միջեւ , որոնք օրուան խօսք դարձած են այս միջոցիս նորէն , զարթոյնութեան սպառնալիքները աւերակալ համատեղութիւններ ստացած ըլլալուն համար :

Ամէն մարդու դիպած բանն է այսօր թիւ ժողովուրդի այն երկեսու խուռն բազմութիւնը որ դունդագունդ ամէն հինգշաբթի կանոնաւոր ճշգրտահոլութիւնով Ղալաթիայի եկեղեցի կը դիմէ , աղօթելէ եւ Երկնաւորէն իր մեղքերուն թողութիւն խնդրելէ բարոյական տարբեր նպատակ ունի , ու ասիկա ասանկ խուռնաւորութեան համար վարանումի պէտք չէ կոչուի , ո՛չ ալ այլապէս , աններելի մեղք մը գործած ըլլալու վախով :

Այդ բազմութեան մէկ մասը հինգշաբթի օրը եկեղեցի վաղելով , հոգեւորէն քիչ մը տարբեր զգացում մը ունի միշտ ընդունաւորապէս : Անոնցմէ խաթուն մայրիկ մը , օրինակի համար , իր դեռատի աղջկան փայլուն նշանած մը ճարելու փափաքը ունի եկեղեցի գալով , — ու այս գերակայ փափաքէն մղուած ժամ եկողները բազմութեան մեծ մասը կը կազմեն , — ուրիշ մայրիկ մը իր աղուն շնորհքով աղուոր աղջիկ մը դուռնելը , ուրիշ մը ցուցադրուելու փափաքը եւ իր կարգին :

Բայց որքան ատեն որ խաթուն մայրիկները եւ իրենց սիրասուն աղջիկները իրենց

զլուծան մնան, ո՛ր եւ է խնդիր չիկայ: Մինակ թէ, գործը հոտ չի վերջանար, եւ մեր փութաջան երիտասարդները, ամէն հինգ-չարթի, իրենք ալ, օրինակելի ճշգրտա-հաշիւներով մը, բան գործ ձգած, եկեղեցի կը վազեն ուր հոգ չէ թէ խաչ մը անդամ լին հաներ: Սակայն Բնութիւնը ուզած է որ գէշ կո՛ղմ մը դանուի ամէն բանի մէջ: Հինգ-չարթի օրերը Ղալաթիայի եկեղեցին ազջիկ-տեսի կամ ողայ-տեսի երթալու այս սովորութիւնը, այդ նպատակներէն զուրս, տար-րեր կերպարանք մըն ալ առած է: Բնոր այն երիտասարդները, որոնք մեծ խնորժա-կով այդ եկեղեցին կը վազեն, աղուոր դի-տաւորութիւնով մը չէ՛ որ տողորուած են ընդհանրապէս: Կարմրելու պէտք չունի՞մ, ըսելու համար թէ անոնք եկեղեցի կ'երթան պարզապէս աղջիկները եւ կնիկները դիտե-լու համար, եւ մեծագոյն սոսուտութիւնով մըն ալ, փոխադարձաբար: Վերջապէս կ'եր-թան անոնք եկեղեցի, կը ցցուին մէջ մէկ կողմ, կը խռնուին, — ահա իր բազմութիւն կըլլայ արդէն, — կը խռնուին՝ իրարու վրայ կոխելու աստիճան սեղմ, աղայ աղջիկ խառն, ամէնէն տհաճոյ ձեւերու մէջ: Ամօթ, պատ-կառանք, չըջահայեցութիւն չի մնար ալ հոն: Անարկներու փոխանակութիւնը, ինչպէս նաեւ թաշկինակի, ծաղիկներու, ձեռնացի լեզուին դադանի խօսակցութիւնը կը սկսի, անոր հետ նաեւ, բնականօրէն ու անխու-տափելաբար, դայթակզութիւնը: Ի՞նչ ընել: Արդիլ՞ ժամուորները իրենց ուխտէն: Ինչ-պէ՞ս կարելի է սակայն տակա: Դայթակ-զութիւն՝ պատճառողը վառտե՞լ եկեղեցիէն: Ո՞վ կը համարձակի կատարել այդ քաջադոր-ծութիւնը հպարտ արժանապատուութիւնով փքացած մեր աղսց վրայ: Ի՞նչ ընել ուրեմն — Անո՛յծ հանգուր:

Անոյծ հանգուց ըսի, ու կը մտաբերեմ թէ որքան չափած է այս միջոցիս այդ ապ-րանքը: Սանասարեանի տեղափոխութեան խն-դիրը, Հիւանդանոցի Յիմարանոցին խնդրումը, եւ դեռ քանի մը ուրիշ մանր մուր բաներ, իրենց լայոր մանուածապատ մանրամաս-նութիւններով, որոնք ժամանակներէ ի

վեր կը զբաղեցնեն լրագրութիւնը առանց վերջնական եզրակացութեան մը յան-գելու, սանկ շուտ մը, մէկ անգամէն: Ա-սոնց մէջէն Սանասարեան վարժարանի փո-խադրութեան խնդիրը բաւական ծանրաշարժ-ներէն եղաւ, ա՛լ յոգնեցնելու չափ զբաղեցը-նելով ամէն անոնք՝ որոնք կը հետաքրքրուէին իրթական այդ մեծ հաստատութեան հարցով: Խնդիրը իր ամենայնապակ պարզութեանը մէջ սա՛-էր սակայն որ, Սանասարեան վարժա-րանը Խարբերդ փոխադրելու մտադրութիւն մը ցոյց կը տրուէր: Շիտակը ես իմ մասիս քիչ մը սկեպտիկ եմ չհասկնալու համար չարժանիթը այսչափ աղմուկներուն եւ իրար-անցումներուն, որոնք տեղի կունենան: Սա-նասարեանի հետ սերտ կապ ունեցողներէն սկսելով, Սանասարեան վարժարան մը կայ մէջտեղը, եւ անոր հետ զայն Խարբերդ փոխադրելու միտք մը: Սրդ, այս մասին «այո» կամ «ոչ» մը վճռուէն աւելի ի՞նչ կայ դուրին, որ այսչափ կնճռոտեցնելու պէտք կը տեսնուի խնդիրը, մինչեւ ուսու-ցիչներու, Խարբերդցի եւ Կարնեցի հասարա-կութեան դանդաղները, հանրագիր պատրաս-տելը եւ գործի խառնուիլը: Մինակ թէ, ինչ որ այդ «այո»ին եւ «ոչ»ին մէջ ամէնէն ա-ւելի վնասուածն է, ասոր անոր բերին նա-յելով եւ ու եւ է գանգաւի անսալով անհետա-տես քայլ մը չառնելն է, որուն վնասը մեծ կըլլայ ետքէն եւ դարձը դժուար:

Սանասարեանէն ոստում մը դէպ ի Հիւան-դանոց: Ձեռնարկ մըն ալ, որուն խօսքը բո-ցապառ արծարծումէ մը ետքը մարեցաւ, Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան, Չազ-մագճլարի զառ ի վարին վրան, վաճառանոցի մը բացումն էր, ուր ցուցադրութեան պիտի դրուէին Հիւանդանոցի արհեստանոցին մէջ պատրաստուած հանդերձեղէնի վերաբերող պիտոյքները եւ տրենի համար շինուած կահ կարասիները, զանոնք սպառելով, հասոյթ մը առաջ բերելու համար Ազգին բազմակա-րօտ Տունին: Ամէն անոնք՝ որոնք մասնաւոր եւսանդով մը կը հետաքրքրուին ազգին հսկայ հաստատութեան մէջ կատարուած գործերով, ուրախութեամբ ոչ ունեցին այս խելացի ձեռ-

նարկը . եւ քիչ թիւ չեն կազմեր անոնք՝ որ բարի նախաձեռնութիւնը պիտի ունենան ամէն կերպով արդիւնաւոր դարձնելու այդ ձեռնարկը , իրենց գնումները ընելով այդ վաճառանոցէն : Բայց որչափ որ ալ փայլուն հանգամանք մը ունենար այս մտածումը , խնդիրը ա՛ն է որ , գործը հոգ չի վերջանար : Առեւտրական ազատ մրցումի այս ժամանակներուն մէջ , Չազմագծերարի ալէս անտեսուած ու անչուք տեղ մը բացուած այդ վաճառանոցը , չի կրնար լիովին իրականացնել այն նպատակը , որուն կոչուած է ան : Ամէնէն կեդրոն համարուած տեղեր հաստատուած նմանօրինակ վաճառանոցներ , իրենց յաճախորդները գոհացնելու եւ աման ապրանք ծախելու տեսակէտներէն այն տեսակ մրցումի մը մէջ են հիմա : որ համեմատապէս շատ քիչ զբաղակցութեամբ ճամբայ ելլող վաճառանոց մը , ինչպէս է Չազմագծերարի մէջ բացուածը , կրնայի մրցակցութիւն մը միայն կրնայ ընել , եւ ատոր վնասը , շատ զիւրին է գուշակելը թէ՛ Հիւանդանոցին է որ կըլլայ :

Հիւանդանոցի մէջ բացուած Արհեստանոցը , ամէնէն զեղեցիկ դործերէն մէկը եղաւ Հիւանդանոցի Հոգաբարձութեան , եւ անիկա այսօր այն տեսակ առաջդիմութեան մը մէջ է , որ կրնայ հասոյթի մեծ աղբիւր մը դառնալ , եթէ միմիայն իր արտադրութիւնները առանց խառնութիւններու անկիւնը սպասելու , փութով սպառին , մանաւանդ որ , Արհեստանոցէն դուրս ելլող ո եւ է ապրանք ուրիշ նմանօրինակ ապրանքներու հետ անհամեմատ մրցակցութեան մը դուրս ելու պայմաններու մէջ է , քանի որ արդէն կէտուակէս . . . շահ է :

Այս նկատումներով , կը տեսնուի թէ , Հիւանդանոցի հոգաբարձութեան համար , առաջնակարգ կերպով անհրաժեշտ դործ մը պէտք է նկատուի այդ վաճառանոցին առաջդիմութեան մղում տրուելը , որուն առաջին պայմանն է զայն ամէն տեսակէտներով յարմար տեղ մը հաստատուելը , — երբ մանաւանդ խնդիրը հասոյթի մեծ աղբիւր մը գտնուելու վրայ է , եւ անիկա ձեռքի տակ պատրաստ կայ՝ եթէ գործածել գիտցուի :

Նկատի առնելով Յիմարանոցի բաժնին խնդրուած ըլլալովը նոր շէնքի մը կառուցումին

համար ըլլալիք դիմումները , ինչպէս նաեւ այս բազմակարօն Հաստատութեան ամենայն առիթով անիկա հարմարութեամբ կարողանալու է Հիւանդանոցի Հոգաբարձութեան համար , ամէն ուրիշ պղտիկ բանիք աւելի , աշխատել այս շատ կարեւոր դործի սրընթաց առաջացումին , որ կրնայ հասոյթի անգերազանցելի աղբիւր մը դառնալ , եւ որ ո՛չ սիկառի թուղթին կը նմանի եւ ոչ ալ ուրիշ ո եւ է չնչին ոչնչութեան , որոնցմէ շատ աւելի մեծ ուշադրութիւն եւ խնամք կը պահանջէ ինք :

ՍԿԻՆԱ

ԲԱՐԻՉԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԻՒՄԵՐ-ՔՐԱՎՅՕՐՏԻ ԳՈՐԾԸ

100 ՄԻԼԻՈՆԻ ԽԱՔԵՈՒԹԻՒՆ ՍԵ

Ոչ վէպ է , ո՛չ առասպել Իւմպեր-Քրավ-Ֆորտի դործը որ , այս միջոցիս , ո՛չ միայն Ֆրանսայի թերթերը , այլ ամէն երկիրներու մամուլը կը զբաղեցնէ , ամբողջ աշխարհը կը հետաքրքրէ :

Իւմպեր ընտանիքը մինչեւ վերջին ժամանակներս Բարիզի ամէնէն փայլուն ու աշխարհիկ կեանքի մէջ բարձրագոյն դիրք ունեցող ընտանիք մըն էր : Պ. եւ Տիկին Իւմպեր ունէին՝ Բարիզ , Կրանտ Առմէ փողոց հոյակապ տուն մը՝ ճոխ ու մեծարժէք կառուարներով . միմիայն պատերուն վրայ կախուած պատկերները 3-4 միլիոն Ֆրանք արժողութիւն ունէին . զիւղերու մէջ վիլլաներ , զբոսեղանիներ , այգիներ , ագարակներ , անտառներ . Սէնի վրայ մեծ շողեռաւ մը , առաջատանաւ մը , կոծառլ եւն . եւն . Մեծ Օթերային մէջ ամենափայլուն օթեակներէն մէկը վարձակալն էր Իւմպեր ընտանիքը որ 30,000 Ֆրանք կը վճարէր : Ասանց ունեցած ձիերու կառքերը ամէնուն սքանչալու մը կը պատճառէին : Վերջապէս , Բարիզցիներու պէս սկզբ տիկ ու չքեղ բաներ տեսնելու վարժուած ժողովուրդի մը հիացումը զբաղեցնող կեանք մը կը վարէր այդ ընտանիքը 20 տարեկէ ի վեր : եւ այս՝ միմիայն փոխառութեամբ :

Ո՞վ են այս Իւմպէրները : քանի մը բա-
սով ճանցնենք այս ընտանիքին անդամները
ու ծագումը :

Թուրուզի մէջ՝ տան մը վերի յարկը կը
բնակէր Իւմպէր ընտանիքը որուն պէտք նոյն
քաղքին համալսարանի համվմէական իրաւա-
գիտութեան ուսուցիչն էր , որ յաջորդաբար
Յերակոյտի անդամ , դատական նախարար եւ
վերջ ի վերջոյ հաշուակալութեանց դիւանի
աւագ-նոսրագահ եղաւ : Վարի յարկը կը բնա-
կէին կանանց ճերմակեղէն ու տանթէլ վա-
ճառող երկու օրիորդներ՝ Թէրէզ եւ Կարսիա
Տօրինեաք , Ասոնց երեք եղբայրները համեստ
պաշտօններ ունէին նոյն քաղքին մէջ :

Այս երկու ընտանիքները իրարու հետ
սերտ կերպով բարեկամացած էին : Պ. Իւմ-
պէրի երիտասարդ տղան՝ Էօթէն՝ կը սիրահար-
ուի Թէրէզ Տօրինեաքի որուն հետ կ'ամուս-
նանայ , ինչպէս նաեւ Պ. Իւմպէրի քոյրը
կ'ամուսնանայ Թէրէզի եղբայրներէն Պ. Էմիլ
Տօրինեաքի հետ : — Ասկէ վերջ , Պ. եւ Տիկ.
Իւմպէր , Օր. Կարսիա Տօրինեաք , Պ. եւ Տիկ.
Էմիլ Տօրինեաք եւ միւս եղբայրը Բուսէն Տօ-
րինեաք՝ Բարիկ կու գան կը հաստատուին ,
եւ կը սկսին շլացուցիչ ու աղմկայոյզ կեանք
մը վարել , ինչպէս վերեւ ըսինք . 20 տար-
ուան մէջ վարստուն միլիոն փրանք կը մտնեն :

Ուսկից կը գտնեն այսքան դրամ եւ ինչ
միջոցով :

Իւմպէրները , — մանաւանդ Տիկին Իւմ-
պէր որ այս ահագին գործին մէջ գլխաւոր
դերը կը կատարէր , — սուտ մը կը նետեն եւ
ասով կարող կ'ըլլան 60 միլիոն չորթել Բա-
րիկի , ֆրանսական դաւառներու եւ օտար
դրամատէրներէն :

Բայց «սուտ» ըսելով չանցնինք , անա՛նկ
աղուոր կերպով ոսկեղօծուած ու ճարտար
սուտ մը որով կը յաջողին խաբել ամէնէն
վարկաւորդները , ամէնէն հաշակաւոր դրա-
մատուները , մինչեւ իսկ Ֆրանսայի Պանքան :

Տե՛սէք ինչպէ՛ս կը սարքեն այս անհե-
թեթ խաբկանքը :

Այս երկու օրիորդները , Թուրուզի մէջ , իրենց
պզտիկ առուտորով զբաղած միջոցին , օր մը
իրենց փողոցին մէջ անցորդ մը գլխի պոսոյտ
կ'ունենայ , վար կ'իջնայ՝ գլուխը խանութին

ապակափեղկին դարձուելով կը վիրաւորուի .
անմիջապէս օրիորդները օգնութեան կը հաս-
նին , մարդուկը ներս կ'առնեն , կը նային ,
կը խնամեն օրերով : Մարդը կ'առողջանայ
եւ կը մեկնի :

Այս մարդուկը ամերիկացի է եղեր , անունը
Ռօպէր Հանրի Քրաւֆօրթ , միլիոնատէր մը որ
լոկ իր հաճոյքին համար ճամբորդելով կ'ան-
ցունէ եղեր կեանքը : Այս գէպէն քանի մը
տարի վերջ , այդ միլիոնատէրը կը մեռնի
Նիսի մէջ եւ կտակով մը իր ամբողջ հարս-
տութիւնը , ջնջին ու խեղճուկ դուստր մը ,
100 միլիոն ֆրանքի մօտ , կը թողու Թէրէզ
Իւմպէրի որ ստիպուած՝ պիտի ըլլար , նոյն
կտակին տրամադրութեան համաձայն , ամ-
սական 30,000 ֆրանք վճարել իր քրոջը՝ Օր.
Կարսիա Տօրինեաքին :

Սակայն այսչափ մեծ հարստութիւն մը
Թերէզի կլլեցնել չեն ուզեր կտակողին եղ-
բորդիները՝ Հանրի եւ Ռօպէր Քրաւֆօրթ .
ասոնք ալ ահաղին հարստութեան ասէր ամե-
րիկացիներ են , եւ այս մասին դատ կը բա-
նան Տիկին Իւմպէրի գէմ : Բայց՝ քիչ վերջը
մէջերնին համախոհութիւն մը տեղի կ'ունենայ
որուն համաձայն վերոյիշեալ հարստութիւնը
ներկայացնող արժեթուղթները կնքուելով կը
յանձնուին Տիկին Իւմպէրի որ զանոնք պիտի
պահէր , իբր աւանդ , իր դրամարկղին մէջ ,
Իւրաքանչիւր Քրաւֆօրթ կը գոհանար միմի-
այն երեքական միլիոնով , պայմանաւ սակայն
որ Օր. Կարսիա Տօրինեաք՝ Քրաւֆօրթներէն
մէկուն հետ պիտի ամուսնանար : Օրիորդը
չուզեր ամուսնանալ , որով նորէն դատը կը
վերածնի Իւմպէր եւ Քրաւֆօրթներու միջեւ :

Տիկին Իւմպէր միշտ յաջողութիւններ կու-
նենայ դատաւարութեան միջոցին , ամենա-
հաշակաւոր փաստաբաններ կը կարգէ իր
գործերուն համար , մեծաքանակ վարձք ու
ծախքեր կը վճարէ : Այս դատաւարութիւնէն
առաջ ու այդ միջոցին կը սկսին անոր չա-
հատակութիւնները . բարձր սակիւսով փոխա-
ռութիւններ կ'ընէ , իր քով զանաւած աւան-
դին անունը միայն ապահովութիւն ցուցնե-
լով . պարտաւորահալկերուն մէջ կը գրէ՝
«վճարելի մեր դատերուն աւարտումին» : —
Երբ փոխառութիւն ընողները այս արժե-

թուզթերուն գոյութեանը ու քանակութեանը մասին պղտիկ տարակոյտ մը ունենային, իրենց նօտարին միջոցաւ Իւմպէր ընտանիքին նօտարներուն կը դիմէին. այս վերջինները համոզիչ վկայութիւններ կուտային եւ անոնց ստուգութիւնը կը հաւատարմին պաշտօնաւթուզթերով որոնց ընդօրինակութիւնները կը ցուցաւէին միշտ. — նօտարի մը վկայութիւնը մեծ հաւատք կը ներշնչէ, մանաւանդ Ֆրանսայի մէջ: Երբ պայմանաւորաբար լրանալուն առնելիքն ուր մը շատ ազմուկ հանէր, անդիէն առդիէն ճարձարակ ընելով պարտքը կը վճարէին. այս կերպով 15 միլիոնի մօտ հատուցումներ եղած են: Այս փոխառութեան հնարքներէն զատ, Տիկին Իւմպէր եւ Ընկ. կը զբաղէր գինիի, պատկերի եւ արժէքաւոր իրերու առուսուրով: Ասով ալ չը գոհանալով Րանթ Վիլամիերի (անշարժ կալուածի փոխարէն ցկեանս եկամուտ մը վճարել) ընկերութիւն մը կը հաստատէ:

Իր զոհերուն մեծ մասը հաստատ կերպով համոզուած էին Քրաւֆօրթի առաջադրական ժառանգութեան, Տիկին Իւմպէրի քով աւանդ ձգուած 100 միլիոնի արժեթուզթերուն գոյութեանը: Վերջին ժամանակներս՝ Տիկին Իւմպէր եւ Ընկ. չահառակութիւններու մէջ ամէնէն աւելի վնասուած դրամատան մը Տնօրէնը՝ Պ. Ժիրար՝ անձնասպան կ'ըլլայ, իր վերջին նամակին մէջ պնդելով իր համոզումին վրայ, թէ Տիկին Իւմպէր անկեղծ է, եւայլն:

Միայն Պ. Վալտէք Բուսօ, Ֆրանսայի արդի նախարարացեալը, փաստարան եղած ժամանակը, Տիկին Իւմպէրի առնելիքներէն մէկուն իրր փոխանորդը դատարանի առջեւ յայտնած ու չեղած է թէ Իւմպէր Քրաւֆօրթի գործը ահապին խորէնքէ մը ուրիշ բան չէ, թէ իրականութեան մէջ ո'չ Քրաւֆօրթ կայ ո'չ 100 միլիոննոց աւանդ եւայլն: Բայց ինչպէս կ'ըլլայ, այս յայտնութիւնը եւ ուրիշ կողմէ բարձրացած բողոքները ուշադրութիւն չեն հրաւիրել մինչեւ այն օրը ուր, այս վերջերս, Տիկին Իւմպէրի փաստարանը Պ. Տիւ Պիւի (պատուաւոր ու հռչակաւոր փաստարան մը) նախնական դատարանի առջեւ, ինքնաբերաբար, աւանդ կրուած արժեթուզթերուն

թերուն զննուիլը կը պահանջէ: Դատարանը այս քննութիւնը կը հրամայէ. երբ քննիչ նօտարները Իւմպէրներու տունը կը ներսայնան, հոն ո'չ Տիկին Իւմպէր եւ ոչ ալ իր արքանեակները կը գտնեն. ասոնք ամէնքէն ալ կծիկը դրած փախած էին: — Տիկին Իւմպէրի ննջասենեակը գտնուող դրամարկը կը բացուի եւ մէջը... 31½ Ֆրանքնոց կեղծ գոհարէ մը եւ մէկ քանի հատ անկախօրթութիւններէ զատ ոչինչ կը գտնուի:

Այս գալթակղական դէպքին վրայ՝ Քրաւֆօրթի փաստարանը եւ Իւմպէր ընտանիքին նօտարները կը ձերբակալուին, ինչպէս նաեւ փախստականներուն դէմ ձերբակալման կողմնակիները կը հանուին: Հիմա երկու հարցս, քննիչ դատաւորներ կը զբաղին այս խորհրդով:

Միւս կողմէ, առեւտրական դատարանը Տէր եւ Տիկին Իւմպէրի դէմ ի բողոքակցութեան եւ ի պաշտօնէ սնանկութեան որպէս կուտայ:

Կ'ենթադրուի թէ դուցէ փախստականները Անգլիա գտնուին եւ անկէ Արժանիքն անցնին, ուրկէ գտնոնք եւ չը կրնար պահանջել Ֆրանսա որ այս մասին դաշնադրութիւն մը չունի Արժանիքն հետ:

Ահա՛ հակիրճ ամփոփումը այս խորհրդական դժուարին որ՝ միակ իր սեպին մէջ պատմական ըլլալու վիճակուած է:

Մ.

ԼԵՊՐԱՐ ԿԻՆԸ

Շուշիկը 21 տարեկան էր, երբ աստոր մտաւ: Երեւանիներու մէջ՝ 20ը անցուկ աղջիկներ պառաւանջ կարող կ'անցնին: Կարգուելու 16 տարին բոլորէր էր. է'լ միջապէս կնիկ մըն է, որ բերնին կապ ու արմալ չունի: Բնականէն ժառանգած էր արու կաշւումածք մը: Աչքերը պապառն, օրոյ-բերան փեռատ ախոսներով, ոտքերը փառիկ, պամբ միջակ, ու մէջքը երկու տակ: Ծիծ ու ծոց-ւոր ըլլալէն մինչեւ 5—6 տարի՝ երեւի վրայ մնաց «Ծուռը վըր գեղին իրաւով է» կ'ընէին: Շուշիկ պակաս ծուռ մը չէր, մանաւանդ

խոռալ էր : Գեղացի խորդերէն՝ որուն որ խօսուեցաւ , փողպատը թոթուելով փախան՝ ինչ որ գեւը սուրբէն : Այս տեսակները՝ անպատճառ աւել-անուն կ'ունենան : Անորոյրեր էին զինքը — Տամշեղ : Չենք գիտեր թէ ինչպէս՝ յաջողած էր լեպըստել մշակ մը՝ Սըր-գոն , որուն հետ ամուսնացեր էր : Կան տա-րիքոտ աղջիկներ՝ երբ մէկ կողմէ կեանքի պայքարին կը պատրաստուին , միւս կողմէ կը ժառանգեն շատ դէշ ունակութիւններ էլ , մանաւանդ անոնք , որ ի բնէ , կամ ժառանգարար ընդունակ են :

Կանանչ պսակը Ծուշիկի համար նոր-հարսնութիւն մը չեղաւ խօս. դժբաղդ Սըր-գոն մոթները կը խածնէր՝ տեսնելով որ դեռ չեղաւ զոստած՝ գլուխ-կնիկէ մը աւելի զրուցկան ու բաց էր եւ «ալէլու-պսակելու» ին կրկնորդ օրը արդէն կը սկսէր տիրել իրեն : Սըրգոն՝ հեղ կամ եղ մարդուկ մըն էր , դարտակ դուրս եւ անճարակ : Երբ տեսաւ որ կողա-կիցը զօրաւոր էր իրմէ լեպով , ուժով ու խօսքով , համակերպութիւնէ զատ ուրիշ բան չկրցաւ մտաւալ , որով՝ Ծուշիկն եղաւ սղիկ-սալ-փորոք (տան մեծը) էա պուճախ տան : Տալէլը ոչ թէ միտակ էրկան՝ իր զլխաւորին , այլ իսկի՝ մէկի մը հետ չէր ուսուեր (հա-մալիլ , շահուիլ) . հաշա չէր իր դասերու (աղգական) , նոյն իսկ իր շաղկիկն հետն էլ :

Արեւը ծագելէն մինչեւ հանգչիլը՝ անկա-րելի էր , որ առանց ճոշքի , կապ ու կռուի անցունէր՝ պատուով (փորձանք) հանելու առ-ախճան : Ոտքը քար առնէր , գրկիցին կը քֆրէր եւ կողուններ իրար կը քսէր , որ մէկը եղնէ իր քֆրէն փոխարինէ : Ծառ ան-գամ վճ հանելու համար կը հալածէր ու կը ամէր գրկիցներուն հորթը , կովը , ոչխարը , գառները : Եթէ յաջողէր՝ չպիտի թողուր որ իրմէն զատ , ուրիշի վրայ արեւ առնէ : Այս անգամ կնիկէն բոլոր գեղացիք կը քչպային :

Մտազարդարը լուսնալու իրիկունն էր : Գեղին ամէն կողմը՝ շինական համաձայնք-ներու մէջ՝ արատաւոր ոգեւորութիւն մը կը ակրէր : Մեծ-պատին աղոռնացից վեց շա-րաթները անցեր ու սկսեր էր գէպ Զատկա-կան հաւկիթ գահալիծութեմ , Հաւ-հինջ մ'էլ ,

ահա ծագկաղարը ծառով , ճղով , աւաք շա-րաթը մեծաշուք հսկումներով ու վերջապէս արեւ-բարեւ խթումը . . .

Մեծ պատի նշանակը փետրվարուկ հաւքի պէս՝ եօթ թեւերը կորուսէր , ման-ցեր էր կիտուկ թեւով մը , որ նոյն առ-տու թռնիքին խօրը պիտի երթար : Խու-ժիկներ ու պղտիկներ էլ չէին զարգնաւոր պատի խորհրդաւոր էա նշանակէն , որ պատ-րաստ էր կցելու պղտիկներու աչքները , եթէ անոնք իշխնայէին պրահիլ կոստեղ ու թացան եւայլն ուսել : Խժառոյ , ճեճոց վե-րուցեր էր աները , Տղաք իրարու զուրկը կը կորէին իրարու ձեռքէն «կարկաշաճները խելու համար (մանուկներու՝ ծագկաղարի համար՝ տախտակէ սիրուն կոչնակներ) : Ծա-տերը ուրախ-զուրախ ու թըռըռալով կ'եր-գէին — «կարկաշաճ կարանաշաճ , ծագարդար՝ զարթէ զատիկ , թափենք զթթուն , ուսենք զմամուն» եւայլն : Նոյն օրը այս պտղաիկ կոչնակը երեխանց աչքի լուսն էր : Անով պիտի տօնէին ծագարդարը մէջ ժամի գաւ-թին՝ էնց մը խաղ ու խնդումով . անով՝ պի-տի ոլորտէին անէ տուն , նուագէին մանկա-կան հոգեկան երգերը , օրհնած ծառ ու ճիւղ քաշիէին ձեռք-բաց հայ արկնոջ , ու փոխա-րէն հաւկիթ ժողուէին : Ծառ մը աղաք՝ հաւկիթ ու կարկաշայի երազներով կը լուս-ցնէին գիշերը , ուրիշներ լարնթիւ կը կա-պէին ձեռքներուն , հալաւով կը պտուէին , որ ժամկոչի նշնուեն ձէնին հետ պատրաստ ըլ-լային ի ժամ՝ պաշտօն-պատարապի ու անկոց խուրձին բաժանումին : Կային շարաճճիներ էլ , որ քնթաթախ ճիւղը կը կապէին իրենց զլխուն վերեւ՝ լսելու համար անոր հաւախօ-սիկ «առաւօտ լուսոյն»ը . . . Հապա ջոջիկնե-րու՝ աւուր պատշաճի բրոցական երկար ա-ղթքները . . .

Երբ գիւղական համայնքը հոգւով մարմ-նով ա'յնքան մխիթարական կը գտնէր վե-րահատ տօնը , բայց կար մէկն ալ , այդ մի-տմիտ շինականներու մէջ , որ ծագկաղարի գիշերուան տառապանքը կը քաշէր : Զարար-տութեան ու նախանձի տանջանքը , որ իրեն քուն ու դադար չէր խառն :

Մեղի ծանօթ Ծուշիկը , որ դեռ ու զիւս-

կանի նման՝ շեպ ու շուպի (*) կ'ելնէր . . .

Ձիւները նոր հալեր էին : Սեւցած էր դաշտ ու դուրան , բայց ծառ ծաղիկ դեռ չէին ծլած : Կծող սառն մը կը փչէր բարակ անձրեւի հետ , որ գետինը լապօրէզ պահելով՝ կ'արգիլէր վարուցանքը : Լճկան , կթան տաւարները դուրս ելած չէին ձմեռնային արգելադրանքէն , որոնց մէջ չինուած աւախներն էլ էրիկ մարդոց ժղլառենն էին , ուր սովորաբար կը հաւաքուէին իրիկուներ , եւ ցորեկի պարապ ժամերը , Նոյն իրիկուն՝ Սըրգոն Վրդոյնց ախոռն էր : Շուշիկը մինակ մնացեր էր տունը , կարծես՝ Աստուած պատժելու համար մինակ կը թողուր զայն : Որովայնի երկու պտուղ ունեցած էր , երկուքն էլ՝ խմոր , խմոր՝ մեռած էին եւ այնուհետեւ՝ ամուլ մնացած էր : Ամուլթիւնն էլ՝ աւելի քարացուցեր էր ապառաժ սիրտը : «Թուխ էր , թուխ ամուլն էլ վրան եկեր էր» կ'ըսէին : Ձնառն խրճիթին մէջ՝ շատ քիչ հեղ ճրագուռս կ'երեւար : Միջնառն կը մնար , չնայելով թէ ծրարուկ ու պահուկ ունէր միշտ՝ ձէթ , բոնցկիկ , ու անքեղ (մոխրի մէջ թաղուած կրակ) : Երկու երինջ ու կով մը ունէր : Վերջինը նոր ծլած էր : Կովին ընթրիք-խտոր տուաւ , հորթը ծծցուց , ու բերաւ թոնիրին կուշտը՝ քուրջերու վրայ նստեցուց : Յետոյ՝ ոտները թոնիրէն կախած հանդ մը մամուսաց , Հակառակ իր սովորութեան , պատուազով ճրագը իջեցուց , ձէթով ողողեց , ու թոնիրէն անթեղը հանելով՝ վառեց , ճրագ-կալ ունէր հողէ՝ որուն վրայ հանդստացուց իր խոռատ ճրագը :

Արդէն լոյսը շատ նուաղիւտ էր , քիչ մ'էլ նուաղեցուց , դուրս ելաւ՝ խցկոյցով երթիքը ծածկեց , դրան կրիւային (փականք) փակը քաշեց , ու տուն մանելուն պէս՝ հողէ բլուրին վաղեց (անտուկ) , ուրկէ քուրջերով պատաստուած հմայիկ մը հանեց ու վզէն կախեց : Յետոյ խաչերկաթը առաւ՝ քանի մը խորհրդաւոր գծեր քաշեց պետին վրայ , ու

(*) Ծ. — «Լեպ» — Նախապաշարուած մը , որ զգալուներու մէջ կը կատարուի կարգ մը խորհրդաւոր՝ ցնորամիտ գործողութիւններով , զրկիցին կամը , խղը , թացան ցամբեցնել՝ իսկ փոխարէն՝ կամ ընտու ընել իր կովը եւայլն :

ծունդ չողաւ ճրագին առջեւ : Կարգով զիտեր , ամենեւին , բայց միմունջներ կը լսուէին լերնէն՝ գրոց էլ , բրոց էլ : Սաղ չմնաց , որոնց անունը չարտասանէր : Այնպիսով Նախապաշարուածով լեցուած՝ նա կուգրաւ մը կ'ընէր , շարունակ հանդոյններ տալով մազէ սեւ լարնթիւն , զոր յատկապէս պատրաստած էր այս նպատակաւ : — Եւ կապէր բոլոր զրացիներու կովերը , որ ցածքին , կաթ չտան : Կ'աղօթէր՝ որ անոնց խոբ ու կաթը բոլորն էր փոխանցուի իր կովին : — «Եօթն աւեր ջաղցով՝ եօթն չորուկ ոսկով՝ կապեմ զկիթն , կաթն Մայրոյի մատիկին , Եղբօյի կովուն , Նազիկի մաքուն . . .

«Եօթն աղբրի ջրով , եօթ կնկայ կաթով կաթովմա՛յ իմ՝ կովուկ , ծո՛ղ դառնայ իր պտուկ . . . » :

* * *

Արդօն՝ շատ անաղան տուն դարձաւ , երբ արդէն գեղացիք՝ ամէն մէկն իր թոնիրի կուտ անուշ քուն մը կը քաշէին : Աշնանէ մինչեւ դարուն էտուցէս էր իր սովորութիւնը , հակառակ չուշիկի թուք ու մուրին , զոր կը տեղադրէ անոր , զինքը մինակ թողուր համար . մինչդեռ իր ուզածն էլ էն էր , որովհետեւ իր աղատու բնաւորութիւնը նշանաւոր էր նաեւ նիփաստիքաւոր (որկրամուր) , Խրճիթին դուռը սովորաբար փակ կը թողուր , ու ինզճ՝ Սըրգոն՝ իրիկուները մինչեւ բանալ ատր , հողին բերանը կը հասնէր : Առանձին մակէն ինչիչէր վախնար — «Գիտնի առկիւնները՝ ամառ չէլին ընկեր են» կ'ըսէին գեղի կնիկիք : Վախ ըսուած բանը չունէր աշխարհ . զինչիւնեք ցորեկէն աւելի որտեղ էր եւ անպատահաւ վրան կը կրէր երկաթէ ափիչն ու խալ երկաթը : Արգօն տունը հասնելուն , զարմանքով տեսաւ որ դուռը կիսփակ էր , բանալով ներս մտաւ : Ոչ ձէն , ոչ շոյս : Ի դուր ձէնքեց , կանչեց , պատասխան չկար : Անիկ կողմը դադըշտեց , բնրնաց . Շուշիկը տուն չէր : — «Էտ շանորդի տառչէլ , հեղ մ'էլ ինչ ստատակուլեան մէջ է» մտածեց :

Գ.Յ.ԱՄ

(Մնացորդը յաջորդ. րիւով)

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՒՆԱ

Վ. Լ. Պ. ՐԱՍՈՒՂ, ՀԱՅԶԵՒ

Թիւ 7

Բայց ներքինան տեսնելը միայն կը բուռէր որ մարդ համակրութիւն մը զգար անոր հանդէպ, եւ ասիկ վերջը, հիմա որ ա՛լ չպիտի տեսնեն այն շնորհազեղ զէմքը, Րէքանաթիւի հին ու աղեղ փողոցները — որովհետեւ Բօլին ինքն ալ կը պզգար իր ծննդավայրէն — պիտի վերադառնան իրենց վայրագ տեսարանը, եւ առաջուրնէ՛ տակի անհաճոյ պիտի երեւան այն մարդոց, որոնք կը սիրեն զեղեցիկը, եւ որոնց համար քաղքին դարդերէն մէկն էր այս աղջիկը :

Լէօբարտի այս նամակը ստանալուն, օրերով փակուած մնաց տունը, չլծողով իրեն մօտենալու նոյն իսկ ամէնէն մտերիմ բարեկամները : Ոչ ոք կատկած կը յայտնէր այս բացարձակ առանձնութեան պատճառներուն վրայ : Միայն իր քոյրն էր՝ որուն բացաւ իր սիրտը խնդրի մը մասին, որ այնչափ սիրելի էր իրեն :

Ինքն ալ ճաշակեց այն տխուր հաճոյքը, որ կը կայանայ իր ցաւերը համակիր հոգիի մը վտանգելուն մէջ . սակայն ասիկա նոյն տարուան վերջերը միայն տեղի ունեցաւ : Մինչեւ այդ առեւնը, չառ ահար կը զգար ինքզինքը, բայց զարձեւալ կաղզուբուրեցաւ եւ ինքզինքը կարող զգաց տեսնելու այն տեղը, ուր իր երկտասարդական յոյսերէն ուրիշ բան չէր մնար . . բայց եթէ զերեզման մը :

Ան նորէն հաստատուեցաւ Րէքանաթիւի սենեակին մէջ . այնչափ ահարացած էր՝ որ կարողութիւն չունէր պատշգամբն վրայ նայող դուռը բանալու եւ պատուհանին մէկ կողմէն դիտելու : Ամբողջ դիշերը տխուր մեղամաղձոտութեան մը մէջ անցուց : Միայն կարճատեւ քունէ մը ետքը առաւունքի մը ոյժ ստացաւ : Լսեց որ թիթիւ հարուած մը արեւունցաւ դրան, իր զրացին էր ներս մանողը :

Լուիճին, զոր հաղիւ ճանչցաւ . խեղճ մարդը տասը տարուան չափ ծերացեր էր երէկի եւ այսօրուան այս կարճատեւ ժամանակամիջոցին մէջ : Դէմքը, որ կատարեալ ուղղամտութեան մը դրոշմը կը կրէր, խորունկ խորչումներով ափսոսած էր . ալեւոր մազերը խառնակ վիճակի մէջ էին եւ զգեստները՝ անխնամ :

Նուաղուն ձայնով մը ներում խնդրեց զաւուրն եւ անպատճառ ալ Պարոն կոմսը խանդարեղուն համար . սակայն անոր ընկիւք յանձնարարութիւն մը ունէր, զոր իրեն պարտք կը համարէր կատարել : Իր զաւակը . . . — Պարոն կոմսը պիտի բարեհաճէր զայն յիշել, քանի որ երբեմն չա՛տ նպաստաւոր կարծիք մը յայտնած էր անոր վրայ, — հիմա ամենաբարին Աստուած անշուշտ չա՛տ տեսած էր անոր չափազանց զեղեցիկ ըլլալը այս աշխարհին համար, եւ կանչած էր զայն յաւիտենական զրախտը : Ամէն նեղութիւն, ամէն խնամք, զորս մարդիկ կրնային տանիլ, անօգուտ եղած էին, թող որ որոշ հիւանդութիւն մը չէր գիտուած անոր վրայ . կարծես թէ հեաղհեալէ կը հալէր, ապրիլի նախաշնչոյ ճառագայթներուն ազդեցութեամբ անհետացած էր, ինչպէս սպիտակաթոյր ձիւնը կը քնջուի գաշառաղեանին վրայէն : Եւ թէ՛ պէտ ձիւնի չափ մաքուր էր, սակայն ոչ անոր պէս ցուրտ . որչափ իր վախճանին մօտենալը կը զգար, այնչափ աւելի քնքուշ կը գտնար, այնչափ աւելի կը նեղուէր իր սէրը մօրը արտայայտելու եւ զայն միխթարելու համար : Վերջին ատենները, վսեմ, գերմարդկային բան մըն էր տեսնել թէ մայրը ինչպէս կը սիրէր խեղճ աղջիկը, ինչ անձնուրութիւն, ինչ աղապատանք կը տածէր

Ներքինայի նկատմամբ, որ երթալով աւելի սիրելի կը դառնար անոր : Վերջին գիշերը, մահիճին քով կանչած էր իր մայրը եւ խնդրած էր անկէ, որ երբ ինքը մեռնի եւ կոմս Ճիաքօմօն քաղաք վերադառնայ, այս պզտիկ քսակը անոր յանձնէ ու բարեւներ խօսի : Մայրը պարտաւորուած էր անոր երգնուլ բոլոր սուրբերուն վրայ, թէ պիտի դոճացնէր իր փափաքը . սակէ դատ, մայրը՝ զիտէր նաեւ թէ իր զաւակը ո՛րչափ յարգանք ու վստահութիւն կը տածէր Պարոն կոմսին հանդէպ : Ներքինայի խնդրանքով, հիւանդին սնարին տակ դրած էին այն գիրքը, ուր ապագրուած էին երգերը, եւ որ հաքը զխօսն տակը պէտք էր գրուէր՝ անոր քունը օրօրելու համար մինչեւ յարութեան օրը : Եւ ահա քսակը : Իր խեղճ էինը չէր համարձակած գալու զայն յանձնելու Պարոն կոմսին : Այս բանը անոր այնչափ նեղութիւն կը պատճառէր, որչափ զաւակին վրայ խօսելու հարկին մէջ գտնուիր :

Ձեռքը գրգռնը տարաւ, դուրս քաշեց ասուիի կտոր մը, բացաւ, մէջէն հանեց քառակուսի պզտիկ քսակ մը ու ներկայացուց կոմսին : Այս վերջինը մինչեւ սրտին խորը կը զգար յուզում մը որուն սասակութենէն կը գողար մարմինը : Քսակը, որ շինուած էր քառակուսի մանր կտորներէ, ճարտարօրէն կարուած եւ ոսկեթիւ ծողերով եղբուած էր : Մէկ կողմը, կանանչագեղ քառակուսի մը վրայ բանուած էր զափնիի տերեւներէ ձեւացած խաչ մը, որուն մէջտեղը Լ մը անդնա գործուած էր ոսկի թելերով : Կոմսը քսակը բացաւ, եւ մէջը մաքուր պահուած ու խնամով ծալուած դատ այն թերթը, որուն վրայ դրած էր իրիկուն մը լերան վրայ բանահիւսած տղերքը : Վերջին տղերքը ստորագծուած էին մատիտի երեք նուրբ գիծերով, իրր թէ Ներքինա մասնախիշիկ ուղած ըլլար, թէ ո՛րչափ խորապէս դրոշմած էր իր յիշողութեանը մէջ, թէ քանի՜ քանի անգամ յեղեղած էր ինքնիւրն հետաքայ տողին միտքն ու հոգին :

«Ու քաղցր է ինձի անհեօթիջ այս ծովուն անդունդներուն մէջ» :

Է.

Երբ գիշերը վրայ հասաւ, եւ լուսաւոր-

ները նորէն երեւցան քնոյ մէջ մխրճուած քաղքին վրայ, Լէօբարտի՛ պատշգամբ նստած էր . ծունկերուն վրայ դրած էր այն քսակը, որմէ — կենդանի յիշատակներու սարսուռով մը — մէկիկ մէկիկ դուրս կը հանէր իրն այնչափ սիրելի եղող առարկաները, եւ ուր վերստին կը գտնէր իր երկար սրտազգուս ներքը, մնացորդները այն բարեբաւակի գիշերուն, ուր պահ մը երիտասարդ զգացած էր ինքզինքը : Հօն էր նարգէսի փունջը . ծաղիկները չորցած՝ թուխ դոյն մը ստացած էին . սեւ մազերուն հիւսակներէն ձեւացած կապը տակաւին իր ցոյքերը ունէր կանթնի լոյսին տակ . ձեռքը աննկուղ վեր վերացուցայ հիւսքը, աւելի մօտէն զիտելու համար : Ամէնքն ալ այն վիճակի մէջ դատ, ինչ վիճակի մէջ որ թողուցած էր իր այնչափ հապնող բաժանուածին տունն : Ու այս տեսարանը աւելի դառնակոխի՞մ գարծուց իր վիշաք :

Ժամացոյցը կէս գիշեր : հնչեց : Քիչ մը հանդարտութիւն մտաւ անոր հոգիին մէջ : Առաւ թերթը եւ իր յիշատակներուն վրայ աւելցուց նաեւ հետագայ էջը .

«Եւ դո՛ւն, Ներքինա, Այս վայրերը միշտ միշտ քու վրադ չե՞ն խօսիր ինձի : Ինչպէ՞ս Միթէ կարելի՞ է որ անհետացած ըլլաս իմ մտածութենէս : Հասաւ ո՛ւր գացիր որ քու անունդ միայն կը գտնեմ, ո՛վ իմ սիրելիս : Աւա՛ղ, ծննդավայրդ ա՛լ չպիտի տեսնի՞ զքեզ . այդ պատահանը ուրկէ անգամ մը խօսեցար հետս, սակէ վերջը շատ տխուր կերպով կը ցոլացնէ լուսնին լոյսը . ան ամառն ու թափուր է արդէն : Ո՛ւր ես այն ատենէն ի վեր՝ յորմէ հեռէ ա՛լ չեմ ըսեր քու անունդ ձայնիդ հնչելը, ինչպէ՞ս ուրիշ անգամ, երբ քու շուրթերուդ երգերուն կ'ունկնդրէի, անոր երգերուն՝ որոնք զիս կը յուզէին, որոնք գէպի աշտելս խուժել կուտային որախ աւրիւնը : Ո՛հ, անէացաւ, մարեցաւ Լուսնիդ փախար գացիր, անո՛ւչ անցիկ : Այնչափ ուրիշներ պիտի բնակին այս բուրումնաւէտ լուսին վրայ . . . Ո՛հ, որչափ չուտ անցար, եկար ու քու կիսնքդ միայն երազ մը եղաւ : Երբոր հոս կը պարէիր, երբ հաճոյքը ձայն եկէ՛ր կ'արատափայլէր, երբ աչքերուդ մէջ մը

ճառագայթէր նախազգացումներով առիթ վրաստանութիւնը, երկուստարգութեան չքեղափայլ լոյսը, անողոք բախար անէացուց այս ամէնքը: Ա՛լ ասկէ վերջը անշարժ եւ զու՛ն: Աւա՛ղ, Ներինա, երբեմնի լարեկամութիւնը անշնչելի պիտի մնայ իմ սրտիս մէջ: Յաճախ հանդէսներու, ակումբներու մէջ, խորհրդաւոր կերպով կը խօսիմ ու կ'ըսեմ ինքնիրենս. «Ո՛հ, ա՛լ ինձի համար չի կան տօներ, պաբեր, Ներինա, որ դաս եւ գեղեցկացնես դաննք քու ներկայութիւնովը ու հրճուանալովը»: Եւ երբ մայիսը վերադառնայ իրեն նոսր երեւոյթով երգերն ու գաղարարեզ ոտները, զորս երջանիկ պատանիները ծաղկահասակ աղջիկներուն տանին, այն տանն պիտի ըսեմ ինքնիրենս. «Ներինա, ա՛լ քեզի համար չպիտի վերադառնայ դարունը, քեզի համար զոյտութիւն չունի այլեւս սէրը, այս պայծառ օրուան մէջ, այս ծաղկաւէտ, այս հրճուալի վայրին մէջ, խնդակից էի քեզի. աւա՛ղ, Ներինա, ա՛լ չպիտի հրճուի, ա՛լ չպիտի տեսնէ ոչ երկիրը ոչ ալ երկինքը: Գացիր հեռացար գուն, ո՛վ իմ միակ լարեկամուհիս, խոյս տուիր. քեզմէ կը մնայ միայն, ո՛վ չըմաղէակ, յիշատակը այն ամէն բաներուն որոնք ինձի սիրելի եղան, մեղամաղձիկ ու քաղցրիկ յիշատակ՝ որ կը յուզէ զիս»:

Կարին Թարգմ. ՅԱԿՈԲ ՊԷՋԻՐՃԵԱՆ
ՎԵՐՁ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ե. Ս. (Սինոյ) — Դանձեցիք ձեր մանուա-բօսքը որուն մեջն 150 դրշ. յանձնեցիք Արեւելի խմբագրութեան:

Գ. Ս. (Մուշ) — Մասիս վերջին հինգ քիւլըր (14-18) դիւցիցիք մէկ ծրարով: Այսուհետեւ պիտի ստանաք կանոնաւորապէս ամէն շաբթու:

Ա. Ս. Ս. (Քաթեմուհի) — Ստացանք ձեր նամակը, ներկալեալ օտմ. նամակադրոշմով՝ ի հաշիւ ձեր բաժանորդագրութեան Մասիսի:

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ. — Անգամ մըն ալ հարկ կը տեսնէք յայտարարելու ամէն անոնց որոնք գաւառներէն բաժանորդ կը գրուին Մասիսին, քե իրենց յանձնարարաւորներ պարտնակող գիրին պէտք է կցուած լլկայ արեւկան բաժանորդագիրը, 50 դրշ., մահաւորաբարով, նամակադրոշմով, կամ փոխանակագրով:

ՀՆՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ. — Այս առթիւ կը խնդրենք այն հին բաժանորդներէն որոնք տակաւին չեն հատուցած իրենց պարտքը, որ հաճին փութացնել: Յապաղման պարագային մէջ, պիտի պարտաւորուինք Մասիսի առաքումը դադրեցնել:

ԳՈՐԾԱՎԱՆԵՐՈՒՆ. — Մեր յարգելի գործակալներուն ալ կը յիշեցնենք՝ իրենց գանձումներուն փութացման եւ հաշիւներուն կարգադրութեան ստիպողականութիւնը:

Տպագրական Տեսչութեան երկու յարգելի անդամներ՝ Մինաս էֆ. Կամարու եւ Լէոն էֆ. Սուրէնեան՝ սուգով համակուեցան մահուամբը իրենց մօրաքրոջ՝ այրի Տիկին Երանուհի Կէլկէլեանի, դուստր Քիւլիւք Յարութիւն Ամիրայի եւ կողակից հանգուցեալ Կէլկէլ Փիլիպոս էֆ ի: Յուզարկաւորութիւնը հանդիսաւորապէս կատարուեցաւ երկուշաբթի օրը, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, ի ներկայութեան հանգուցեալ տիկնոջ պարտաւորներուն եւ բաղմամբիւ ծանօթ անձնաւորութեանց, եւ մարմինը փոխադրուելով Խասգիւղի աղդ. գերեզմանատունը, ամբիօփուեցաւ ընտանեկան դամբարանին մէջ:

Հանգուցեալը ագնուատած, բարի ու առաքինի կին մըն էր՝ բոլոր զինքը, ճանչցողներուն յարգանքը զրաւած:

Պառնաս Պօղոս էֆ. ի յուզարկաւորութեան հանդէսին, որ կիրակի օրը կատարուեցաւ Սիււաթարի Ս. Խաչ եկեղեցին, ներկայ էին — բացի բաղմամբիւ եկեղեցականներէ որոնց զուխը կը գտնուէին Երէցեան Տ. Գէորգ եւ Վեհապետեան Տ. Մկրտիչ Սրբազանները — Տպագրական Տեսչութեան զինաւոր պաշտօնէութիւնը, մամուլի ներկայացուցիչներ եւ յուզարկաւորներու ստուար բաղմութիւն մը: Դամբանականը խօսեցաւ Տ. Մկրտիչ Եպիսկոպոս: Դադաղը եկեղեցիէն գերեզմանատուն փոխադրուած միջոցին՝ կեդոնները բռնած էին՝ Երուանդ էֆ. Եւստօֆեան, Պետրոս էֆ. Կարապետեան, Միհրան էֆ. Քիւրքճեան, Յակոբ էֆ. Արապեան եւ Կարապետ ու Ս. Այճեան էֆ.ները: Դադաղին առջեւէն կը տարուէին, առանձին բարձիկի մը վրայ զրուած, հանգուցելոյն պատուանշանները: Թաղումէն ետքը, Տպագր. Տեսչութեան ներկայացուցիչները՝ որոնց զուխը կը գտնուէր Քեամիլ պէյ — օգնական Տպագր. Տեսչութեան — որ եկած էր ի զիմաց Տպագր. Տեսչու Վեամ. Հըֆդի պէյի, ինչպէս նաեւ բաւական թւում յուզարկաւորներ, հանգուցեալին բնակարանը երթալով՝ իրենց ցաւակցութիւնը յայտնեցին Օր. Վիքթորիա Պառնասեանի:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Կայս. ընդհ. — Վեհ. Սուլթանը բարեհաճած էր հրամայել որ Կայս. անձնական Գանձէն 6000 զրշ. շնորհուի՝ Կայս. Պալատան թարգմանիչ եւ Տպագրական Տեսչութեան Ա. քարտուղար Պօղոս էֆ. Պառնասի յուզարկաւորութեան ծախքերը հոգալու համար : Սոյն գումարը կիրակի օրը յանձնուեցաւ հանգուցեալին աղջկան՝ Օր. Վիքթորիա Պառնասեանի :

Ս. Պատրիարք Հայրը շարժուա մէջ ֆրանսական դեսպանատունը՝ երթալով, Մարթինիքի աղէտին առթիւ ցաւակցական այցելութիւն տուաւ դեսպան Պ. Քոնսթանի որ շնորհակալութիւն յայտնեց :

Պատրիարքաւան հասած հեռագիրը մը կը հաղորդէ թէ Խարբերդի Պատր. Փօխանորդ Եղնիկ Մ. Վ. Գալբալճեան Բաղէշի առաջնորդ ընտրուելու է :

Կարապետ Էմ. Ասեփանեանի մահուան լուրը, որ Պոլսոյ հայ լրագրութեան չըջանըրաւ նախորդ շարժուն, անհիմն է եղեր բարեազգարար : Իզմիրցի փոստաբանը ողջ առողջ է, եւ կը շարունակէ զրազի իր արուեստովը ինչպէս նաեւ, կ'աշխատակցի Արեւ. Մանուկին որուն վերջին թիւին մէջ «Բաց Նամակ» մը ունի : Տօքթ. Ն. Տաղաւարեանէն եւ «Լարախաղաց Գառապարեան»ի կենսագիր՝ Նկարիչ Յարութիւն Ճիւլանեանէն ետքը, այս երրորդ անձն է մեր մէջ որ իր կենդանութեանը բազմաօրութիւնը կամ դժբաղդութիւնը կուենայ կարգալու իր յիշատակին նուիրուած լրագրական գամբանականները :

Գրականութեան մեկեմասները, որչափ ալ հազուադիւրս դարձած մեր մէջ, բոլորովին անհետացած չեն եղեր : Իզմիրցի ծանօթ ազգային մը, իրր համակրական արտայայտութիւն մը Պ. Գրիգոր Շահինեանի նկատմամբ, փափազ յայտնելու է անոր որ եւ է մէկ հեղինակութեան տպագրութեան ծախքը հոգալու : Ծաղիկ որ կը հաղորդէ այս բերկրաթիւ լուրը, կ'աւելցնէ թէ այդ հեղինակութիւնը պիտի ըլլայ «Բնական եկեղեցական պատմութիւն» մը զոր Պ. Շահինեան կը պատրաստէր երկար ասանէ ի վեր եւ որ 250 էջ պիտի գրուէ : Պէտք չունինք ներկայացնելու Պ.

Շահինեանը (Մանիոյէն) որ ազգ. թերթերու մէջ իր հրատարակած բնատախրական զրական գեղեցիկ յօդուածներովը համակրելի անուն մը չինած է իրեն : Մասիսի մէջ ալ, անցեալ տարի, հրատարակած ենք իր մէջ նորավէպը՝ դաւառի կեանքէ :

Բարեգէն կը գրեն թէ, — ինչպէս կարգայնք օրաթերթերու մէջ, — Արեւելեան կենդանի լեզուներու վարժարանին մէջ տանըմէկ հոգի հայերէն կը սորվին : Ուսուցչական Տօքթ. Մէյնէ, ինքն ալ չըջանաւորաւոր վարժարանին, յառաջիկայ տարի պիտի ելեր հայերէն աշխարհաբար դաս տալու :

Նեանախօսութիւն. — Հաճոյքով կը ծանուցանենք Նիկոմիդիոյ ազգայիններէն՝ ասեւարական պատուաւոր դիրքի տէր եւ համաբերելի՝ Երիտասարդի մը, Աբրահամ էֆ. Կատանեանի նշանախօսութիւնը Օր. Թադէֆ Գ. Կիւրճեանի հետ, նախկին ստուռի Բնարայի Էստեան վարժարանին, ինքն ալ տաւած ազնիւ ձրքերով :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՅՈՒՄ

Դում Դարուի չորս թաղերու Աղքատանեանին ի նպաստ կազմակերպուած թատերական ներկայացումը, — որուն Կարգաւոր Մանախումբին նախադասութիւնը ստանձնած է Տիգրան էֆ. Տէր Ներսէսեան, Պատրիարքարանի Ա. գործակաւարը, — տեղի պիտի ունենայ վաղը՝ կիրակի, Ժամ 6 1/2 թ. Թէփէ-Պաշին թաղապետական թատրոնին մէջ : Մտակեան էֆ. ի թատերախումբը իր ռեքլամքովն յառաջին խաղերէն մէկը ընտրած է սոյն ներկայացման համար, ԾԵՐՈՒՆԻ ԴՈՒՆԱՊԱՆԸ, առամ 5 արարուածով, որուն պիտի յաջորդէ ծիծաղաշարժ գաւառ մը՝ ՆԱԻԱՊԵՏ ՌՈԼԱՆ, Անշուշա ենք որ իր 13 տարուան գոյութեամբը ու մարգարայական աշխատութեամբը ծանօթ Աղքատանեանին հրաւէրը համակիր ընդունելութիւն մը դատէ : Բարեւտէր հասարակութեան կողմէ : Արդէն ներկայացման շահեկանութիւնն ալ աւելցուով սոյն ցերեկային բարեկարգական նպատակին վրայ, տարակոյտ չի թողուր որ թատերասրահը ընդուն պիտի ըլլայ վաղը ցերեկ :

Արժանատի Կ. Ս. Իմիթիճեան

Տպագրութիւն Ե. ՄԱՏՈՒՆՈՍԵԱՆ

Կ. Պոլս, Ֆինճանըլար եօղաշու, Թիւ 27

Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱԲԱԼԷ



Վաճառք

Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ ատալնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուսարդի պարզ օճառներ։ Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանք գէժ մրցելու առաւելութեան կը միացնէ գիններու պերագանց աժանութիւնը։ Փախադռններուն՝ քաթալօլը ձրի կը զրկուի։ Մեծաքանակ գնումքնէլ ուշողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱԲԻ Կ. ԻՆՃԻՃԻՆԱՆ ՈՐԴԻԲ վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով։

ԲԱՐԻՉ.—ՊՊ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաբուտօն։
ՊՈՐՊԱՅ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ.
ԱՂԵՔԱՆԵՐԻՆ.—Պ. Մ. Գալֆանան
ԳԱՀԻՐԷ.—Պ. Հ. Ռոզմարալ.
ՌՈՒՍՃՈՒԳ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք.
ՎԱՌԱ.—Պ. Կեռն Արտիքի.
ԻՋՄԻՏ.—Պ. Յակոբ Մոմճեան

ԶՄԻՌՆԻՆ.—Պ. Հայերիս Վառնիկ.
ՍԵԼԱՆԻԿ.—Պ. Տիմօ Ֆերմանտեզ.
ԻԻՍԿԻԻԿ.—Պ. Մ. Բափուանօ.
ՊԷՅՐՈՒԹ.—Պ. Ֆրանքի Շիֆֆեր.
ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան եղբարք.
ՏՐԱՊԻՋՈՆ.—Պ. Արիս Կ. Էլեմճեան.
ՍԵՐԱՍՏԻԱ.—Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան.
ՌՈՏՈՍԹ.—Պ. Պ. Յակոբ Բոօլատալ.



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԻԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄԲ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ
Եւրոպականութեան գումար

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մաքսան հին տեղը

Ընդհ. Բնէթի

Ա. ՀԻԻՐՄԻԻՉ

34,775,642 Դրամք

121,765,333

164,172,000

Ընդհ. Գործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵԼ

“AU TALON D'OR,”

Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՁԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՐԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կաշարա, Վոյլոնա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կոշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ շինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը որ միշտ գոհ թողուցած է իր բազմաթիւ յաճախորդները, մանաւորապէս ինքնին ու օրիորդները որոնք այնտեղ կրնան զոնեղ ու պատրաստել տալ բարիգեան կոշիկներ:

ԻԻԹԻԻՃԵԱՆ ԿՍՐԱՊԵՏ ԷՖԷՆՏԻԻ Եւ տեւեալ թարգմանութիւնները կը գտնուին մայրաքաղաքիս գրաւաճառներուն քով:

Թափառական Հրեայ

Սկզբունք Քաղ. Տնտեսութեան

Կարմիր մարդոց երգումը

Ընտանեզուրկ

Փարիզի ամուսնութիւնները

Արուարձանին տղան

Հանրակառքին ոճերը

Ընտանեկան գաղտնիքներ

Հատոր	Չք
4	50
1	4
2	10
2	12
1	5
3	15
1	5
3	15



Ձեռքի, ուրիշ եւ ձեռքի ու ոտի միտնգամայն մեքենաներ կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարճ մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենեւեալ կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ այնպիսի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ԲԵՐԱ, ՄԵԾ Բողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց:

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաւեստութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր բաղաճներուն մէջ

ՇԱՐԼՈՒԿԱՆ
ՄԱՍՆԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ